

եւ դէտ հայրս մեր Գրիգոր զըւարթուն բաբունապետն սրբակրօն¹:

Ընդ մեզ էր յամենայնի ի սկզբանց անտի եւ մեծապատիւ եղբայրն իմ Աբրահամ վսեմաբան եւ քաջաշնորհ Վարդապետն, որ է այժմ վերատեսուչ եւ արժանաժառանգ Առաջնորդ Տարօնոյ եւ գահակալ սրբոյ ուխտին այնորիկ²: Իսկ եւ ներե՞ծերունի եւ ճգնազգեսաց Վարդապետն եւ Յօնանէ՞ Վարդապետն եւ այլ բազում կարգաւորք, սարկաւազունք եւ կրօնաւորք: Հուսկ եւ ես յեանեալ շնչինս Յօնանէ՞ մեղապարտ խղճուկ պաշտօնեայս, եւ ի բնէ զբաւեցեալ ծառայս Աբրահամ, որ ահա եւ զտիշատակարանս իսկ ծրեցի:

Եւ մինչ էաք ի Բեւեռայն, ի քաղաքս աստուածակեցոյց, ի ՌՃԿԲ (= 1713) թվականին, բազում անգամ հրաւիրմամբ եւ սաստիկ ստիպմամբ աստուածասէր ժողովրդոց եւ յորդորմամբ Տեառն Իսահայ՝ Պատրիարքի գահին սրբոյն Սահիմայ, հարկեցեալ եղաք տանիլ զորդրմութիւն հաւատացեալոցն ի սուրբ Երուսաղէմ եւ ծառայել աստուածակոխ տեղեացն³:

Եւ հասեալ մերոյս անարժանութեան՝ ի կաթնամեղրաբուզիս աւետեացն քաղաք, մատուցաք

լուչ քան զառաջինն. զՍուրբ Հոգի խորանն, որ յառաջն էր ի գաւթի ի ներքոյ զանգակատան՝ փոխադրեցին ի մէջն անդ զանգակատանն (Ինճիճեան. անդ, էջ 196):

1 Գրիգոր Վարդապետ Ս. Կարապետի Առաջնորդ եղած էր արդէն Կարապետ Եպիսկոպոսի վախճանումէն ետքը 1707—1713 տարիներու մէջ:

2 Աբրահամ Վարդապետ յաջորդեց Գրիգոր (Շըլթայակիր) վարդապետին, երբ սա Երուսաղէմի պատրիարքը նորուեցաւ 1716—1717:

3 Կ. Պուլի Պատրիարք Սահակ Ա., որ նոյն ատեն պատրիարք էր Երուսաղէմի. երկու Պատրիարքութիւններու միացման հետեւանքով: Բառնաբասի եւ Պօղոսի Երուսաղէմ տարած ողորմութիւնը (= օրհնութիւն) կը փոխարեւէ Կուրտ (Գործք ԺԱ. 29—30. Ա. Կորթ. Թ.):